

զլուխն, և ում յատուկ մտադրութիւն գարձնել հարկ չկինի։ Այժմեան գործածուած միջոցները փորձառութեամբ կը տեսնեմք որ բաւական չեն լինիր. զօրաւոր միջոց մը նախնիքներէն աւանդուած և յաջողութեամբ գործածուած՝ մեզի պատրաստ է։ Այդ միջոցը մեր պէտքերուն դարմանն է, մեր յարաբերութեանց ամրապնդուելուն միջնորդն է, մեր միութիւնը զօրացնելու պատճառն է. իսկ միութիւնը ոչ թէ բարութեանց աղքիւրն է միայն, այլ մանաւանդ թէ ինքն բարութիւնն է։ Մեք կը բաղձամք այդ միջոցը նորոգուած տեսնել և ցնծութեամբ գոչել, «Իբրև զի՞ գեղեցիկ են ոտք աւետարանչացն խաղաղութեան և աւետարանչացն բարութեան»։

### ՄԱՂԱՔԻ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՕՐՄԱՆԵԱՆ

#### ՃԵՐՈՒԹՅԻՒՆ

(Յ. Մաշ. 19, 2.)

Ով ծերունի, ինչո՞ւ է գլուխդ ձիւնի պէս փայլում։ — Որովհետեւ իւր փայլովը ցոյց է տալի թէ՝ վաղո՞ւց անց է կացել իմ գարունո, իմ գլխիս վրայ եղած ձիւնի պէս սպիտակ մազն առում է թէ՝ այս աշխարհումն ամեն բան ունայն է։

Եւ ինչո՞ւ համար ես ման գալի, գլուխդ այդպէս շատ քաշ արած։ — Քանի ու քանի ծանր բեռներից դադրած, ուժից ընկած, կցանկայի հանգստանալ. այժմ ձեռնափայտիս վերայ ծռած, իմ գերեզմանիս տեղն եմ պտուում։

Միթէ քո սրտիցը դուքս եկաւ ասլրելու, կեանք վայելելու սէրն ու ցանկութիւնը։ — Կեանքի իսկական բաղդաւորութիւնը զնուր տեղը պտռեցի. այժմ վերջացնում եմ ճանապարհո ու յոյսս դնում Աստուծոյ շնորհաց վերայ։

Աստուծածային նախախնամութիւնն ամեն մի հասակի պարգևել է իւր առանձին առաւելութիւններն, իւր առանձին ուրախութիւններն ու ցաւերն, որպէս զի երկրաւոր բաների ամեն

փոփոխութիւնների մէջ յաւիտենական բանի վերայ մտիկ տանք՝ և Աստուծոյ արքայութեան ձգտինք, կեանքի վարժառունը վերջանում է միայն մեր մահովն:

Ամեն մի մարդ ցանկանում է խորին, գոհ և պատուաւոր ծերութեան հասակի հասնել: Այն ժամանակը՝ հանգստութեան օրերումը կվայելէր իւր աշխատութիւնների և աստուածային օրհնութեան պտուղները. կցանկանար, որ իւր սիրու հանգիստ լինի ու միամտուի, որ իւր զաւակներին կրթեց՝ ու նորանց հոգսը քաշեց. յէր ուղենալ աշխարհիցս բաժանուել, հեռանալ՝ առանց իմանալու, որ իւր երկրաւոր կեանքի պարտականութիւնները կատարել, վերջացրել է: Մենք ջանք ենք անում, որ աշխատանք անենք, բանի տէր լինինք. հոգս ենք անում ու բան յետ ձգում ծերութեան օրերի համար, որ գոհ սրտով վայելել կարողանանք մեր աշխատութեան հունձքը: Ծեր մարդը հասել է այն նպատակին, որ շատերին համար փափագելի է. հազարաւոր մարդիկ նորա նման բաղդաւոր չէին. հազարաւորները մեռան իրանց կեանքի ընթացքի մէջ, իրանց յօյսերը կատարուած չտեսնելով:

Տարիքն անց կացած ու ծերացած մարդն ունի արդէն իւր հանգստանալու ժամերն: Աշնան երեկոյին դադրած հնձուորի նման՝ հանգստանում է նա իւր խուրձերի վերայ, ու մոիկ է տալի ընդարձակ դաշտին, որ ինքը մշակել է: Առաջուան ոյժը չունի, թուլացել է, բայց դեռ ևս օգուտ է բերում աշխարհին իւր շատ ու շատ փորձառութիւններովն: Եթէ որ չէ կարող օգտակար լինել իւր խորհուրդներով աւելի լայն ու մեծ շրջանների մէջ, իւր որդիքն ու աղջկեքը կան, որոնց համար մի խելացի հօր ակնարկները շատ խրատական են: Երախտագէտ սրտով նորան շրջապատում են այժմ իւր զաւակներն ու թոռներն: Երբոր նորանք դեռ ևս փոքր էին ու թոյլ, նորանց համար հոգս էր քաշում ինքն ու նորանց օգնում: Այժմ ամեն մէկը նորանցից ջանք է անում, որ նորան աշխատութիւն՝ կամ նեղութիւն չտայ, ու փոխատրի նորան ամենայն սիրով նորա արած ամեն, մի փոքր ու մեծ հոգացողութիւններն իրանց համար: Ծերութիւնն այնպիսի մի պատկառելի հասակ է, որ ամեն մի մարդ պիտի պատուէ: Մարդիկ, երբոր ծերն աշքը ձգում է իրանց վերայ ու մտիկ տալի, կանգնած են մնում՝ առանց խօ-

սելու, ու նորա խորին ծերութիւնը շատ պատուել է տալի իրան։ Ծերունուն ամեն տեղ պատուաւոր տեղ են տալի երիտասարդները, գտակ են հանում, իրանց գլուխը բաց անում առաքինի տան հօր արծաթափայլ գլխի առաջը։

Ծերունին աչքը ձգում է դէպի ետ՝ իւր անց կացրած տարիքի երկար շարքի վերայ ու մտիկ է տալի իրը մի խառն երազի վերայ. շատ անգամ ուրախանում է նորա սիրտն իւր միայնութեան մէջ, այդպէս մտիկ տալով։ Աւելի սիրով միտքն է բերում իւր երեխայութեան օրերն։ Իւր կեանքի մէջ պատահած ու վաղուց անց կացած խառնաշփոթ դիպուածներից արդէն շատ բան մոռացել է նա. բայց ինչ որ իւր մանկութեան տարիքներում իրան ժպտում էր, այդ՝ անջնջելի կերպով մընացել է իւր յիշողութեան մէջ։ Սիրով յիշում է նա գեռ ևս իւր այն ժամանակուայ բարեկամներին ու ընկերներին. նորանցից շատերն արդէն մամուապատ գերեզմանի մէջ են ննջում. շատ անգամ տխուր սրտով նորանց կարօտն է քաշում։ Երկրաւոր ու յաւիտենական կեանքն իւր աչքի առաջ աւելի են մօտենում միմեանց։ Իւր երեխայութեան օրերում անպղտոր հրճուանքով տեսնում էր նա՝ ինչպէս աշխարհս առաւօտեան արշալուսով պայծառ փայլում էր. այժմ արել մայր է մըտնում, ու տեսնում է, որ աշխարհս իւր երեկոյեան գեղեցիկ կարմրութիւնովն անց է կենում, և իւր չորս կողմն եղած տեսարանները, քանի գնում են, աւելի մուկթն են երեւում ու մթան մէջ ծածկուիլ սկսում։ Սորա համար փափագում է նա, որ գերեզմանից դէնն անցնի ու գնայ այն կեանքը, սուրբ աշխարհը. փափագում է յաւիտենական կեանքի առաւօտեան արշալոյսներին, իւր յաւիտենական կեանքի մանկութեան աշխարհին, որոյ համար ընտրել է իրան իւր Աստուածն։

Այս, մարդկային ամեն մի հասակն էլ ունի իւր ուրախութիւններն, և աստուածային բարութիւնը մեր ոչ մի հասակն առանց խաղաղիկ ու մեղ բաղդաւորեցնող բարերարութեան չէ թողել։ Իրաւ է, ասում են թէ՝ տարիների բեռը վերջապէս ճնշում է մարդու՝ ու ծերութիւնը դժուարատար է։ Բայց ծերութիւնը մի ծանր բեռն է նորա համար, ով որ իմաստնաբար ու քրիստոնէաբար չէ ապել. այնպիսի մարդու համար կեանքի ամեն մի աստիճանին հասնելն էլ ծանր է։ իսկ Աստու-

ծոյ բարեկամին համար ամեն մի հասակն էլ սիրով ողջունելի է: Ամեն տեղ էլ հոգսերն մեզանից անբաժան են. փորձանքներն ու անբաղդութիւնները մինչև անգամ ամենուրախ մանկական հասակին էլ միշտ չեն խնայում:

Իրաւ է, մարդկային հասակների մէջ մեծ տարբերութիւն կայ: Մեր երիտասարդութեան տարիքում առողջութիւնից տրաքւում էին մեր անդամները, մենք զգում էինք մեր մէջն ոյժ ու բուռն ցանկութիւնն, որ ոչ մի արգելքից չվախենանք ու յետ չքաշուենք, և ամենադժուար բանին անդամ քաջութեամբ յաղթենք: Այժմ բանը փոխուել է, ուրիշ կերպ է եղել: մարմնաւոր տկարութիւնները, քանի գնում են, մեզ վերայ երեւում: Հիւանդութիւններն ու ցաւերը հազիւ են որևէ իցէ մարդու բոլորովին խնայում:

Մեր ոտերը թոյլ են փոխուում ու դժուար են ման գալի: մեր աչքերը կորցնում են առաջուան սուր տեսութեան զօրութիւնը: մեր վիզն ու մէջքը սկսում են ծռուել: — Մեր պատանեկութեան ու երիտասարդութեան տարիների մէջ, երբ որ մի ձախորդութեան էինք հանդիպում, շատ չէինք մոածում վրան՝ ու հեշտ կերպով էինք անց կացնում: Եթէ որ մի ըսպէս մեր սիրուը մթնում, տիրում էլ էր, ետեկից գալիս էին կրկին աւելի ուրախ յօյսերի լուսաւոր կէտեր: Այժմ բանն այնպէս չէ: ծանրութիւններն աւելի թուելի են, ու հոգսերը՝ ձմեռուան զիշերների ստուերների նման՝ աւելի երկար են տեսում ու աւելի մութն են: Մեր պատանեկութեան ու երիտասարդութեան տարիքումը մարդկային ընկերութիւններն՝ և ընդհանրապէս՝ մարդոց հետ նիստ ու կաց ունենալն ուրախ սրտով ցանկանում էինք: Այժմ, երբ որ փորձով տեսել ենք մեր շատ ու շատ խարուիլն, աւելի ցանկանում ենք այն մարդոց հեռու քաշուել, մինչև անգամ ուզում ենք այն մարդոց վրայ էլ հաւատարմութիւն չունենալ ու կաօկած տանել, որոնց որ երբեմն մեր բոլոր սրտով կպած էինք: Այս, մեր պատանեկութիւնն ու երիտասարդութիւնը մեր գարունն էր, իսկ ծերութիւնն՝ այն օրերի սկիզբն է, որոնց համար ասում ենք թէ գուր չեն գալի:

Բայց և այնպէս զարմանալի է, որ քիչ ծեր մարդիկ կան, որոնք որ երկրորդ անգամ էլ նոյնչափ ապրել ցանկանային,

ինչքան որ ասլրել են՝ մանկութիւնից ոկտած մինչև իրանց ծերութիւնն, եթէ վիճակուած էլ լինէր իրանց երկրորդ անգամ նոյնչափ կեանք ունենալ, որչափ որ ապրել են։ Այս, ես ճանաշում եմ իրանց տարիքն առած շատերին՝ թէ տղամարդոց և թէ կանանց, որոնք որ ըստ երևութին իրանց ունեցած շատ չափաւոր և համեստ վիճակովն անգամ իրանց բոլոր սրտովը գոհ են իրանց կեանքից։ Սորանից հասկանում ենք մենք, որ ծերութիւնն էլ իւր առաւելութիւններն ունի, որ պարզեռում է իրան մարդասիրաբար յաւիտենական սիրոյ աջն։

Արդէն ամեն օրուան աշխատութիւններից յետոյ՝ կեանքի երեկոյին հանգստանալը մի այնպիսի զբոսանք ու զուարճութիւն է, որ նորահասակի քանի ու քանի ուրախութիւններից շատ աւելի ծանր կշիռ ունի։ Պատանեկութեան ու երիտասարդութեան տարիքների զուարճութիւններն աւելի բուռն ու կատաղի էին։ բայց ինչպէս շուտով անց կացան։ Ինչպէս շատ անգամ յետոյ դառն զղջում թողին մեր սրտի մէջ։ Ների՝ իւր կեանքի մէջ արած ու կատարած գործերից յետոյ հանգստանալը՝ նման է ապահով ուխաղաղ նաւահանգստին, ուր հասել է նաւորդը՝ ծովային երկար ճանապարհորդութեան վտանգներից ու միրիկներից յետոյ։ Իւր հասակը ցոյց է տալիս, որ արդէն դիմացել է նա մի ամբողջ կեանքի աշխատութիւններին, անց է կացրել բոլոր տաք տաք կուիւներն, որ տարիքն իրանց հետ բերին, ամեն վիրաւորանքներն, որ պատճառեցին։ Ներն ուրախանում է իւր պատուաւոր կերպով աշխատածի վերայ, որ իւր ջանքովն ու քրտինքով ձեռք է բերել, ու էլ չէ փափագում կրկին նոյն նեղութիւններ քաշած օրերն ունենալ։

Բայց ոչ միայն հասել է նա մի աւելի ապահով ու հոգսից ազտ դրութեան՝ իւր կեանքը պահպանելու կողմից, այլև—ինչ որ շատ աւելի արժէք ունի—հասել է և հոգւոյ իսկական հասունութեան, նախապաշարմնունքներից ազատ մի ճանաչողութեան մարդկային ամենայն հանգամանաց, սրտի մի աւելի սուրբ տրամադրութեան, որ աւելի դառնում է դէպի աստուածայինն ու յաւիտենականը։ Հազար տեսակ ուրախալի ու դառն փոքճառութիւններն, որ ունեցել է իւր կեանքի մէջ, սորվեցրել են նորան աւելի պարզ կերպով ճանաչել, որ երկրաւոր բանն անկայուն է, և լաւ հասկանալ մեր սւնեցած վիճակ-

Ների Տնօրինողի իմաստութիւնն։ Ամեն մի մարդ գիտէ, որ ինքը շատ սիալանքներ է արել, շատ ծուռ բաներ բռնել։ Երբոր ինքը իւր մէջը գանգատում՝ է հողեղէն մարդու թուլութեան վերայ, զգում՝ է նոյնպէս, ինչ որ առաջ երբէք այդպէս չէր զգացել, թէ միայն Աստուծոյ հետ ունեցած առնչութեան (յարաբերութեան) մէջ կգտնի հոգւոյ խաղաղութիւն։ Երանի նորան, ով որ այս խաղաղութիւնը կգտնի։ Այդպիսի անպղտոր մի բաղդաւորութիւն նա ոչ իւր պատանեկութեան ու երիտասարդութեան՝ և ոչ իւր այրական հասակումն է երբէք զգացել, որ այժմ պարզեւում է իրան ծերութեան հասակի մաքրուած ու զտուած արժանաւորութեան մէջ։

Բայց այս ևս քիչ բան չպիտի համարել, որ մարդուս՝ տարիքն առած օրերումն՝ իւր ընտանեաց շրջանն իւր համար՝ իւր միակ և իւր ամեն բանն է դարձել, ինչ որ իրան դեռ ևս կապում է երկրաւոր կեանքի հետ։ Երբեմն նորա աշխատութիւնը դէպի դուրսն էր, աշխարհի մէջ պատիւ ու նշանակութիւն ստանալու ետեկցն էր։ բայց տեսակ տեսակ պատրանքներն յետ տարին նորան դէպի ամենամաքուր աղբիւրն երկրաւոր բարեբաղդութեան—դէպի ընտանեկան կեանքն։ Այստեղ, ուր որ իւր որդիքն ու աղջկունքն իրան շրջապատում են, ուր որ նորատի իւր թոռներին, իւր ծունկերի վերայ ճօճում է, ուր որ շատ անկեղծ ու շնորհակալու սրտի պատկառանք ու պատիւ է տեսնում։ դէպի ինքն, և ուր որ իւրայինքը մին մինից աւելի ջանք են անում ու աշխատում ամեն կերպ իւր կեանքի երեկոն ուրախ կերպով անց կացնել տալու, —այստեղ նա այն նպատակին է հասել, որոյ ետեկց երբեմն զուր տեղն էր դուրսը դէս ու դէն ընկնում։ Ամեն բան, որ երբեմն իրան զուարձութիւն էր բերում, կամաց կամաց իւր մէջը մեռնում է։ իւր պատանեկութեան ու երիտասարդութեան օրերի ծանօթները մեծ մասմբ արդէն իրանից առաջ գերեզման են մտել։ իւր ընտանեաց անդամներին անգամ, որոնց որ երբեմն սրտով կպած էր, վաղուց կորցրել է։ իւր պարտաւորութիւններին վերաբերեալ սովորական զբաղմունքները դադարել են։ առաջուան տարիների ուրախառիթ զուարձութիւններն էլ չեն հրապուրում իրան, կարծես համ ու հոտ չունին իւր համար, —ամենայն բան իւր չորս կողմումը մեռնում է, և իրան մնացած է միայն իւր ա-

մենամերձաւորների սուրբ հաւատարմութեան թանկագին մարդարիտը։ Ով Աստուած, ինչպէս շատ ես օրջնել Դու մի տարիքն առած հօր, կամ մի պառաւած մօր, երբոր պարգևել ես նորանց այն ուրախութիւնն, որ իրանց վերջին բովէները բարեկիրթ զաւակաց շրջանի մէջ անց կացնեն։ Այն ժամանակ միայն այդպիսի տարիքն առած ծնողքը միփիթարուած ու հանգիստ սրտով մի օր Քո աթոռիդ առաջը դուրս կդան ու կարող են ասել՝ այստեղ եմ ես և նոքա, որոնց որ Դու ինձ տուիր։ Նորանցից ոչ մէկին չեմ կորցրել։

Այո, ծերութիւնն էլ սիրտ ուրախացնող իւր լուսաւոր կողմերն ունի. այն ժամանակամիջոցը չէ, որ միայն մարդկային թուլութեան ծանրութիւններովը մեզ բեռնաւորում է, կամ մեր սիրտը լցնում միայն դժգոհութիւններով ու տիսրութիւնով։ Սպիտակ հաղեցը պատիւնեցի նախն էն, «Ե գոյնուած էն աբդարանուած ճանապարհի վեցայ։

Սպիտակ մազերն այս, թագ են իւր կեանքի ճանապարհորդութեան մէջ նորա համար միայն, որ արդարութեան ճանապարհը հաւատարմութեամբ է ման եկել։ Ծերութիւնը կրկնապատիկ հոգսերի ժամանակամիջոց էլ կարող է լինել առաւելապէս մեր իսկ մեղքից։ Ով որ իւր պատանեկութեան ու երիտասարդութեան տարիքի մէջ անկարգ կեանք անց կացնելով, իւր մարմինը թուլացրել է, չպիտի զարմանայ, երբ որ յետոյ առողջ կեանք չէ ունենում։ ով որ իւր ունեցածը, պատուաւոր կերպով աշխատելով, հաւաքել՝ պահպանելու տեղն, իւր ձեռք բերած կարողութիւնը վատնել է անվայել կերպով, ոչ ոքի մեղաւոր բռնել չէ կարող, երբ որ թշուառութեան մէջ է ընկել. ով որ իւր զաւակները վատ է մեծացրել, ուշ է լաց լինելն, երբ որ նորանք իւր գլխին չարիք են բերում։ ով որ ծանր յանցանքներ է գործել, պէտք է իւր խղճմտանքի մէջն ունենայ սիրտը կրծող մի օրդն, որ երբէք չէ մնանում։ Ինչ որ մարդս ցանել է, այն էլ պէտքէ հնձի, — այս է սուրբ գրքի վըճռական խօսքն, և այնչափ ճշմարիտ է այս խօսքն, որչափ որ ճշմարիտ է, որ երկնքումը մի յաւիտենական արդարութիւն կայ։

Եղած բանը չեղածի տեղ դնել այլ ևս կարելի չէ։ Զուր տեղը կուզենար ծերունին իւր անց կացած կեանքի յիշատակը մըտ-

քիցը ջնջել, երբ որ իւր ետևից անդադար գալիս են իւր իսկ գործերն: Բայց ամենաթշուառ մարդուն համար էլ դեռ ևս միշտ բաց է մեր ամենողորմ Ցիրոջ գթութեան դուռն, և իսկապէս ծերութեան օրերն են դորա համար նշանակուած՝ երկրաւոր կեանքի վերջին կարճ ժամանակամիջոցը գործ ածել մեր հոգւոյ փրկութեան համար:

Ինչպէս որ կեանքի ամեն աստիճանների ու հասակների մէջ ու քրիստոնէի ամեն հանգամանաց մէջ ինքնաճանաշութիւնն առաջին քայլն է դէպի առաքինութիւն, այսպէս կվայելէ մանաւանդ ծերին, որ շատ անգամ ինքն իւր մէջը մտնի ու ինքն իրան քննի: Այս բանին է տանում նորան ոչ միայն իւր մարմնոյ անզօր գրութեան մէջ գտնուիլն ու գերեզմանի մօտեցած լինելն, այլ և իւր հոգւոյ աւելի բարձր հասունութիւնն և աւելի պարզ ու պայծառ ճանաչումն, որ ունի մարդկային բաների վերայ: Նա մի ճանապարհորդի է նման, որ երկար ու դժուարին ուխտազնացութիւնից յետոյ, մագլցելով մի կերպ վերջապէս բարձրացել է լերան գագաթն՝ ու մոիկ է տալի իւր տնց կացած բոլոր ճանապարհի վերայ՝ իւր ամեն պտոյտներովն, անդունդներովն և ապառաժուտ սեղերովն: Այժմ ամեն բան՝ իւր ունեցած կապակցութիւնովը՝ նորա համար պարզ է՝ թէ քանի անգամ ու որչափ տեղեր էր անց կացել, ճանապարհը կորցնելով, ու թափառել. այժմ հասկանումէ նա այն վտանգներն, որոնց մէջ ինքն իրան ձգել էր և որոնցից օգնեց իրան դուրս գալու նախախնամութեան սուրբ ձեռքը միայն, որ գըլիսով ոտքով չկորչի: Իւր ունեցած երկար կեանքի սխալանքներն իւր հոգւոյ առաջն են գալիս ու յորդորում իրան թէ՝ հաշտեցներ խղմտանքդ Աստուծոյդ հետ, քանի որ դեռ ժամանակ կայ:

Աստուծոյ հետ հաշտուիլը լինում է միայն մեր սիրուր զըղմամբ մաքրելով, ինչ որ մարդս չար բան է արել, այժմ առաքինութեամբ պէտքէ փոխարինի. այն անիրաւութիւնն, որ արել է իւր եղբայրակիցների դէմ, պէտքէ մոռացնի, կրկին յետ դարձնելով այն, ինչ որ իրան սեպհականեցրել էր, նորանց զրկելով. այն վէրքերն, որ հասցը էր ուրիշներին՝ ատելութիւնիցը, սիրով պիտի քժշկի: Թեթևամտութեան տեղ պիտի բռնի լրջամիտ ու քրիստոնէութեան խսհեմութիւնը. հին չար

կրքերի տեղը՝ մաքուր որտի յաղթութիւնն :

Խնդր քեզ ճանաչիր : Ծերութիւնն էլ երբեմն իւր ծանր մեղանքներն ունի : Աւելի ևս ատելի է, քան թէ մի երիտասարդի, կամ այր մարդու՝ մի ծերի վերայ տեսնելն այն պակասութիւնն, որ նա ժլատութեան մի անկուշտ գերի է, և իւր հաւաքած գանձերը պինդ պահում է այնպէս, որ կարծես թէ երբէք իւր հարստութիւնից բաժանուելու չէր . կամ թէ՝ երբ որ նա իւր դժգոհ կամահաճութիւնովը նեղացնումէ ու տանջում իրան շրջապատողներին, ու այն ասոիինանին է հասցնում նորանց, որ վերջապէս իւր մահը՝ փոխանակ նորանց սուդ ու տրտոմութիւն պատճառելու՝ մի ցանկալի բան է լինում, որ իրանից ազատուեցին . կամ երբ որ նա՝ ծաղրալի կերպով՝ երիտասարդների արած յիմարութիւնների ճանապարհն է բռնում, նորանց նման նոյնն անելով, որ ուրիշների առաջն ու հէնց ինքն իրանից էլ ծածկի, որ ծերացել է : Այս իւր վարմունքի մէջ՝ իւր բունած վատ գործի ու արած զգուելի սիսալանքի վերայ աւելանումէ միշտ իւր ծիծաղելի՛ դառնալը մարդկանց աչքում :

Ով տարիներդ առած քրիստոնեայք, որ ձեր կեանքի երեկոյին էք հասել, որ ձեր երկար կեանքի մէջ աշխարհումն շատ բան էք տեսել, շատ փորձանքների մէջ ընկել, ու աւելի փորձառութիւն, աւելի իմաստութիւն, աւելի բարեպաշտութիւն ու կատարելութիւն ստացած պիտի լինիք, — պատանիներին ու երիտասարդներին օրինա՛ կ դարձէք : Նորանց ամենահաւատարիմ բարեկամներն եղէք, բայց նորանց յիմարութիւններին մի հետեւէք : Ով որ իւր ծերութեան արժանաւորութիւնը մոռանում է, ինքն իւր յօժար կամքով հրաժարւում է պահանջելուց, որ իրան խնայեն, ու պատիւը պահեն, ինչ որ իւր տարիքին համար պէտք ու արժան էր, որ ունենար : Ծեր մարդն այլ ևս չէ կարող հաւանելի լինել իւր մարմնոյ գեղեցկութիւնով, ոչ էլ իւր առաջուան ուժովն ու աշխուժութիւնով . նա սրտեր պիտի շարժի բարձր առաքինութիւններովն, իմաստութիւնովն պիտի դուր գայ, իւր բարեբարոյ, ւթիւնովն ու քաղցըր վարմունքով սրտեր գրաւի :

Ճանապարհ ցոյց տուող եղէք ձեղանից տարեկով փոքր եղող պատանի ու երիտասարդ ձեր քրիստոնեայ եղբայրներին, բայց ձեր դժգոհ ու տրտնջացող ընութիւնովը մի խանգարէք նոցա

ուրախութիւններն, որ վայելելու իրաւունք ունի նորատի և առոյգ հասակը։ Մի ձանձրացնէք ու զզուեցնէք նորանց, գանգատելով՝ թէ այժմեան նորահասակների վարդ ու բարձն աւերուել է ու մի փառաբանէք այն ժամանակներն, երբ որ դուք պատանեկութեան կամ երիտասարդութեան հասակի մէջ է իք։ Մտածեցէք, որ այս ու այն սովորութիւնները, կիրառութիւններն ու բարձերը փոխւում են, բայց ոչ թէ, փոխուելով, վատացել են։ Մտածեցէք, որ ձեր ոյժը պակասելով, դուք աշխարհիս հրապոյրների համար, քանի գնացել էք, բթացել. այն հրապոյրների համար, որ մի ժամանակ ձեզ էլ ուրախութիւն էին բերում։ Երկրաւոր ուրախութիւնների անցաւոր լինելն, որ դուք փորձով տեսնում էք, պէտքէ ձեզ դրդի, որ յորդորէք ու խրատ տաք պատանեկութեան ու երիտասարդութեան հասակի մէջ եղողներին՝ խելացի կերպով վայելելու նոյն ուրախութիւններն, որ մի ժամանակ դուք վայելել էք։ Ներողամիտ եղէք հասակով ձեզանից փոքր եղողների սխալանքներին ու շատ խիստ կերպով մի դատէք նորանց, ձեր պատանեկութիւնն ու երիտասարդութիւնը միտներդ բերէք։ Զեր կեանքի վերջին ըուպէններն էլ ամեն տեղ ձեր շուրջը ուրախութիւն տարածեցէք։ Զհաւատացող ու կասկած տանող ընութիւն մի ունենաք։ Սիրեցէք աշխարհն ու նորա բնակիչներին ձեր ծերութեան օրերումն էլ Յիսուսի աշակերտի սիրով՝ ու ձեր ընտանեաց մէջ խաղաղութիւն, սէր ու միաբանութիւն ձգելու պատճառն եղէք։

Այն ժամանակ, երբ որ ձեզ Աստուած, մեր յաւիտենական Հայրն կկոչի այն ուրախութիւնները վայելելու, որ պատրաստուած են երկնքումն, այն ժամանակ ձեր զաւակները, ձեր բարեկամները, ձեր ծանօթներն արտասուքով ձեզանից կբաժանուին, այն ժամանակ ձեր յիշատակն օրհնող նոցա աղօթքը ձեզ կուղղեկցի այս աշխարհիցս դէնը մինչև Աստուծոյ աթոռի առաջն։ այն ժամանակ ձեր օրինակը մի օր նորանց աչքի առաջ կգայ, երբ որ իրանք էլ կծերանան։ այն ժամանակ արդարի յիշատակն օրհնութեամբ դեռ երկար կտեի։

Ամենալարող Տէր, իմ օրերիս Կարգադրիչն ու Կառավարիչն, իմ կենաց Տէրն, ով իմ Ստեղծող Աստուած։ Իմ կենաց համար Քո սահմանած տարիներն որպէս և իմ մահուանս համար

Քո որոշած օրը ծածկուած է մթութեան մէջ, և ես չեմ իմանում թէ՝ որ ժամն ինձ այս աշխարհիցս յետ կկանչի: Ես չգիտեմ թէ՝ ի նչ փորձութիւններ, ի նչ գլխիս գալիքներ գեռ ևս կան ինձ համար որոշուած: Միշտ կօրհնեմ ու կփառաբանեմ Քո ճանապարհներդ, որով ինձ տանում ես. պատճառ որ ի նչ ճանապարհով, որ Դու ինձ տանում ես, ինձ դէպի երջանկութիւն ես տանում: — Եւ եթէ որ կատարուէր իմ համեստ ցանկութիւնս, եթէ որ մի քանի տարի էլ երկարացնէիր իմ երկրաւոր ընթացքս. որ ես իմայիններիս դեռ երկար ժամնակ օգտակար լինել կարողանայի, Քո ամենաբարի Զեռքովդ ինձ պարզեած այդ աւելորդ ժամնակն իմ կեանքիս վերայ գործ կը դնեմ՝ ինձ լաւացնելու համար: Ա'խ, ի նչպէս հեռու եմ դեռ ևս կատարելութիւնից, որ ինձ համար ցանկանում եմ. ի նշքան դեռ անարժան եմ լաւագոյն աշխարհի քաղաքակիցը Անելու: Բայց լի վստահութեամբ խոնարհում եմ Քո անչափ օղորմութեանդ ու հաւատարմութեանդ առաջ:

Թօղիմ կեանքիս վերջանալու օրերն էլ Քե՛զ նուիրուած լինին: Թօղ, երբ որ իմ սսկորներս ծերութիւնից կթուլանան, հոգիս աւելի զօրանայ իմ Աստուծոյդ արքայութեան համար: Եւ երբ որ մի օր, ով իմ Տէր, հանգիստ կերպով ննջեմ դէպի Քե՛զ, ախ, այն ժամանակ բոլոր իմայիններիս բաղդաւոր թողնէի ու հանգիստ սրտով աչքս փակէի աշխարհիցս. նորանց այնպէս թողնէի ինձանից յետոյ, որ համոզուած լինէի թէ՝ իրար մէջ միմեանց սիրում են, ինչպէս Քրիստոս մեզ սիրեց:

Պարգևէր ինձ մի օր ուրախ վախճան, որ ճշմարտապէս կարողանամ ասել՝ Տէ՛ր, այժմ աըշտէում էս Քո ծառայէր գնալ Էտղալ-լուլէտէք: Ա. Նէն:

Թարգ. ԳՐԻԳՈՐ ԵՊԻԾԿՈՎՈՍ ԱՂԱՓԻՐԵԱՆ